կուսդոսի. զոր Տէր Յիսուս տացէ նմա սիրտ սուրբ, և հոգի ուղիղ նորոգեսցէ ի փորի իւրում. զի լիցի ըստ օրինացն և ըստ պատուիրանացն Աստուծոյ անարատութեամբ, առանց ակն առնելոյ և կաշառաց. սիրել զամենեսին, և միապէս խնամել զմեծն և զփոքրն, և քաղցրութեամբ վարել և հովուել զիշխանութիւն իւր, ի փառս Աստուծոյ. ամէն. ամէն. և եղիցի։

1572. Թվ. ՌԻԱ. Բարեպաշտ թագաւորն Զիկմունտ Ակուսդուս առ Աստուած փոխեցաւ, առ յոյսն ամենեցուն։ Յետ փոխելոյն Նորա բազում տարակոյս եղեւ ի մէջ իշխանաց. վասն զի ոչ գոյր յետնորդք այս թագաւորիս՝ որ ժառանգէր զաթոռ իւրոյ հայրենի. և եղեւ անիշխանութիւն աշխարհիս այս երկու ամ. յետոյ մեծ ժողովք եղեւ ի մէջ իշխանաց և ամենայն մեծամեծաց, և բազում խորհուրդ և քննութիւն արարին ի մէջ իւրեանց, թէ ուստից և կամ զո՞ ոք դիցեն թագաւոր. վասն զի հակառակութիւն կայր ի մէջ նոցա, ոմն այս կոյս և ոմն այն կոյս խորհէին. ոմանք զՁեսարին (կայսեր) որդին կամէին, ոմանք զՄոսքովին իշխանն կամէին. և ոմանք այլ և այլ իշխանացն կամէին. և այսպիսի հակառակութեամբ ոչ կարէին հաստատել զխորհուրդ իւրեանց։ Յետոյ Ֆրանցուսքի (Փռանկաց) թագաւորն զիւր դեսպանն առաքեաց եպիսկոպոս մի, այսինքն է Էլչի՝ ի ժողովս նոցա. և նա եկեալ հնարիւք և մեծաւ ճարտարութեամբ և իմաստ(ուն) բանիւք հաւանեցոյց զամենեսեան և հաճեցոյց, զի զթագաւորն իւր ընդունիցեն ի թագաւորութիւն, զոր և եղեւ իսկ. ամենեցուն հաճոյ թվեցաւ, մեծի և փոքու, զի Ֆրանցուսքին թագաւորեսցէ ի վերայ նոցա։ Զոր և իսկոյն առաքեցին (ի) մեծամեծ իշխանաց և արքունի խորհրդով առ նա, զի եկեալ թագաւորեսցէ ի վերայ նոցա. ուր (որ) և կամակից եղեւ նոցա և հաւանեցաւ թագաւորել նոցա այսմ աշխարհի, որ կոչի Նէմիչնոց, այսինքն է Բոլաքայ (Լեհաստան)։ Ուր և առաքեցին նմա զթագաւորական զտօմարն և զհրամանն թագաւորական և զիշխանութիւնս ի վերայ ամենայնի, ըստ օրինի սահմանաց և կարգաց նոցա, նա և զերդումն և զուխտն իւրեանց. զի որպէս նախնոյն թագաւորաց կարգաւ և սահմանաւ վարէին զիւրեանց երկրին զթագաւորութիւն և զիշխանութիւն, նոյն կարգաւ և սահմանաւ և սա թագաւորեսցէ և տիրեսցէ ի վերայ նոցա և ամենայն երկրի նոցա։ Ըստ նմին օրինակի և թագաւորն նոցա ուխտադիր և դաշնադիր եղեւ նոցա. և երդուաւ նոցա, զի որպէս նախ քան զինքն թագաւորք իշխեցին և տիրեցին ի վերայ նոցա և ի վերայ աշխարհի նոցա, նոյն օրինակաւ և կարգաւ և ինքն տիրեսցէ, և ըստ հասարակաց կարգաց հովուեսցէ և տիրեսցէ ի վերայ նոցա. և ոչ մի ինչ փոխեսցէ և նորաձեւ սահմանս կարգիցէ. այլ ըստ հնոյն և առաջնոյն սահմանաւ վարեսցէ զնոսա։

1573. Եւ էր թիւ Հայոց ՌԻԳ (ՌԻԲ) յորժամ նստաւ ի թագաւորութիւն. և փետրուար ամսոյ ԻԲ աւուրն բուն բարեկենդանին կիրակին հաստատեցաւ ի վերայ աթոռոյ թագաւորութեան իւրոյ. և է 25 ամաց երիտա-